Հաստատված է

ԵՊՀ սովորողի և գրադարանի
ընթերցողի միասնական տոմս
ներդնելու և օգտագործման մասին
«_27_» _06_ 2012թ. N_118§52_ ԵՊՀ ռեկտորի հրամանով

ԵՊՀ սովորողի և գրադարանի ընթերցողի միասնական
տոմսի պատրաստման և հանձման ընթացակարգ

1. ԵՊՀ գրադարանն ապահովում է համապատասխան ուսանողական տոմսերի տպագրությունը և ուսանողական տոմսերը դրանց ստացման մատյանների հետ փոխանցում է համապատասխան ֆակուլտետներին (կենտրոններին):

2. ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունն ապահովում է սովորողների տվյալների շտեմարանում առկա ուսանողական տոմսերի պատրաստման և գրադարանի ընթերցողների տվյալների բազայի վարման համար անհրաժեշտ տվյալների (տեղեկատվության) տրամադրումը և համապատասխան շտեմարանի հասանելիությունը: Ասպիրանտների տվյալները ԵՊՀ գրադարանին տրամադրում է ԵՊՀ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժինը:

3. ԵՊՀ ֆակուլտետները (կենտրոնները) եռօրյա ժամկետում ԵՊՀ գրադարանի կողմից ստացված ուսանողական տոմսերին փակցնում են ուսանողների լուսանկարները, հաստատում դեկանի (կենտրոնի տնօրենի) ստորագրությամբ և վերադարձնում ԵՊՀ գրադարանին: Միաժամանակ ուսանողի երկրորդ լուսանկարը (3x4սմ) տրամադրվում է ԵՊՀ գրադարանին՝ գրադարանային քարտի վրա փակցնելու համար:

4. ԵՊՀ գրադարանն ուսանողական տոմսերը ներկայացնում է ԵՊՀ պրոռեկտորի ստորագրման, ապահովում տոմսերի կնքման և լամինացման աշխատանքները: Լամինացնելուց հետո գրադարանն ուսանողական տոմսերը փոխանցում է համապատասխան ֆակուլտետներին (կենտրոններին):

5. Ուսանողական տոմսը ստանալիս ուսանողը ստորագրում է համապատասխան մատյանում: Ուսանողական տոմսի վավերականության ժամկետը լրանալուց հետո համապատասխան կարգավիճակը պահպանելու դեպքում՝ սովորողին անվճար տրամադրվում է նոր ուսանողական տոմս:

6. Ուսանողական տոմսը կորցնելու դեպքում սովորողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել գրադարանի աբոնեմենտի բաժնին: Կորցրած տոմսը

վերականգնելու կամ վնասված տոմսը փոխարինելու համար սովորողը դիմում է ներկայացնում ԵՊՀ պրոռեկտորին: Նոր տոմսը տրամադրվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարովի հիմունքներով: Ուսանողը տոմսը ստանալու համար ԵՊՀ գրադարան պետք է ներկայացնի ուսանողական տոմսի վերականգնման համար կատարված վճարման կտրոնը և մեկ լուսանկար (3x4սմ):

7. Կորցրած կամ վնասված ուսանողական տոմսի վերականգման վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ:

Հաստատված է

ԵՊՀ սովորողի և գրադարանի
ընթերցողի միասնական տոմս
ներդնելու և օգտագործման մասին
«_27_» 06 2012թ. N_118§52_ ԵՊՀ ռեկտորի հրամանով

ԵՊՀ սովորողի և գրադարանի ընթերցողի միասնական տոմսի նմուշ